



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

«Պատմական հուշարձանների և կուլտուրական մյուս արժեքների պահպանության նկատմամբ հոգատարությունը Հայկական ՍՍՀ քաղաքացիների պարտքն ու պարտականությունն է»:  
(ՀՍՍՀ սահմանադրություն, հոդված 66)



Խորանաչատ. Համալիրի ընդհանուր տեսքը հյուսիսից

### Գլխավոր եկեղեցու հյուսիսային շքամուտք

Միջնադարյան Հայաստանի Խորանաչատի վանքային համալիրը մեկն է պատմական Տավուշ գավառի վանքային շորս համալիրներից: Այն գտնվում է Հայկական ՍՍՀ Շամշադինի շրջանի Զինարի գյուղից հյուսիս-արևելք:

Հիմնադրված է XIII դարի սկզբին հայ եկեղեցու նշանավոր գործիչ, ուշալ հոգևորական Հովհաննես Վանականի կողմից: Այստեղ նա կազմակերպել էր հոգևոր կրթության, դպրության և գրչության հանրահայտ կենտրոններից մեկը, որտեղ ուսանել են միջնադարյան հոգևոր մշակույթի ու պատմագրության այնպիսի աչքի ընկնող գործիչներ, որպիսիք են Կիրակոս Փանծակեցին, Վարդան Արևելացին, Մազաթիան, Գրիգորիս Աղթամարցին և ուրիշներ:

Պարսպապատ (ալժմ կիսավեր) տարածքի վրա տեղավորված վանքային համալիրը բաղկացած է գլխավոր եկեղեցուց, գավթից, միաբանների խցերից (նույնպես կիսավեր) և մի փոքր եկեղեցուց:

Ս. Աստվածածին եկեղեցին (1211—1222 թթ.), պատկանում է Հայաստանի խաչազմբեթ եկեղեցիների խմբին, սակայն նրանցից տարբերվում է իր հատակագծի համաչափությամբ: Այստեղ արտաբուստ քառանկյունի հատակագծում ամփոփվում է զգալի չափերի քառակուսի աղոթասրահ: Վերջինիս արևելյան կողմում տեղավորված են ավազ խորանը երկու կողմերի կրկնահարկ ավանդատներով, ըստ որում ավազ խորանի կիսաշրջան պատը մասնատված է 12 որմնախորշերով (նմանությամբ Անիի մայր տաճարի, Մակարավանքի գլխավոր եկեղեցու և այլն):




Եկեղեցու երկու մուտքերից մեկը բացվում է արևմտյան կողմից, գավթի միջից, իսկ մյուսը՝ հյուսիսային ճակատում: Եկեղեցին ճակատների ղեկորատիվ հարդարման տեսակետից բնորոշ է XIII դարին: Արևելյան ճակատը մասնատված է հատակագծում եռանկյունաձև երկու որմնախորշերով, որոնք պսակված են հորիզոնական գոտիով իրար միացված կամարտներով: Գրանց միջև գտնվող հարթության վրա տեղավորված են տրամատավոր երեսակայնիքով զույգ լուսամուտներ, իսկ դրանցից և հիշատակված գոտուց վերև, ճակտոնի տակ՝ նույնպիսի տրամատներով կազմավորված մի մեծաչափ ուլիեֆ խաչ: Հարուստ հարդարմամբ աչքի է ընկնում նաև հյուսիսային ճակատը, հատկապես շքամուտքը, որի բարավորն ունի մուգ և բաց երանգի աստ-աձև ու ոտբաձև քարերով իրականացված օձավոր շարվածք: Նույնպիսի



Ս. Կիրակի եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից



Գլխավոր եկեղեցու գմբեթը



Գավթի ներքին հորինվածքը

շարվածք ունի նաև գավթի կողմն ուղղված արևմտյան շքամուտքի բարավորը:

Գմբեթի թմբուկի վրա առանձնանում են կամարավոր լուսամուտների ուռուցիկ երեսակալները: Թեև դրանց մի մասը շինարվեստի տեսակետից անկատար է (ինչը, հավանաբար, հետևանք է հետագա վերակառուցումների), սակայն ընդհանուր առմամբ հարազատ են ողջ հուշարձանի ոճական նկարագրին:

Գավթի կամ ժամատունը (1253 թ.), որը կցվել է եկեղեցուն արևմտյան կողմից, պատկանում է հայկական քառասյուն գավթիների տիպին, այն տարբերությամբ, որ արևելյան անկյուններում ունի կցված ավանդատներ: Տվյալ տիպի

հուշարձանների համար արտասովորը նաև արևմտյան ներսի պատի համատարած մասնատումն է 12 որմնախորշերի միջոցով, մի բան, որ եզակի երևույթ է: Ընթացում է, որ խորանների, տվյալ դեպքում՝ որմնախորշերի առատության պատճառով վանքը ստացել է նորանշատ անունը: (Կիրակոս Փանձակեցին այդ անունը բացատրում է եկեղեցիների շատությամբ):

Կառուցվածքային լուծման տեսակետից առանձին հետաքրքրություն է ներկայացնում քառասյուն այս գավթի կենտրոնական հատվածի գմբեթային ծածկը կառարի լուսիջույցով (երդիկով): Մակարավանքի (Բշեանի շրջան), նեղու-



Եղեղեցու արևմտյան համալիրից արևելք (ս. Ճգնավար եկեղեցի)



Քանդակ գավթի նախնական ևն-հին պատին



Գլխավար եկեղեցու տեսքը  
նյութա-արևելից



Գլխավար եկեղեցու տեսքը  
նյութա-արևելից

ցի վանքի (Հրազդանի շրջան) գավթի կենտրոնական հատվածի գմբեթային ժածկի նմանությամբ այն իրականացված է փոխադարձ հատվող 6 կամարներով, որոնք այս կառուցվածքում շրկամարների գեր են կատարում:

Գավթի՝ ընդհանուր առմամբ պարզ ու ծլատ արտաքին նարտարապետության մեջ ձևերի հարստությամբ աչքի է ընկնում արևմտյան շքամուտքը: Բացի դարաշրջանի շքամուտքերի հարդարմանը բնորոշ միջոցներից, նարտարապետը դիմել է նաև մոնումենտալ քանդակի օգտությանը: Շքամուտքից աչ և ձախ տեղադրված են պատի մեջ ազուցած եզան գլուխներ պատկերող բարձրաքանդակներ: Կենդանակերպ նույնպիսի բարձրա-

քանդակներ կան նաև գավթի ներսում, արևմտյան պատին: Նույն դարաշրջանի այլ հուշարձաններում հանդիպող կենդանիների և թռչունների նմանորինակ բարձրաքանդակները, բացի ղեկորատիվից, նաև իմացարանական նշանակություն ունեն:

Ս. Կիրակի եկեղեցին (XIII դ.) տեղադրված է գլխավորի մոտ, հարավային կողմում: Նրա գմբեթի սլացիկ թմբուկը (որը հենվում է գմբեթատակ շորս կամարների վրա) իր վերձիվ ծավալով խոյանում է վանքի համայնապատկերում, կազմավորելով նրա ծավալատարածական հորինվածքի երկրորդ գերիշխողը (գլխավոր եկեղեցու գմբեթից հետո):

Նամակիրից արևելք, պարսպապատի



**Գլխավոր եկեղեցու հյուսիսային շէմսուտի մտերմատ**

սահմաններից ղուրս, գտնվում է ս. Կիրակի եկեղեցու նմանությամբ մի այլ փոքր եկեղեցի: Միջնադարյան գերեզմանատուն (որտեղ ենթադրությամբ թաղված է վանքի հիմնադիր Հովհաննես Վահագանը) և զարդանախշերով զարդարուն թեափոր մի խաչքար:

Խորանաշատ վանքային համալիրը իր կազմի մեջ մտնող հուշարձաններով անտարակույս լավերից մեկն է զարգացած միջնադարի ժամանակաշրջանի Հայաստանի վանքերի թվում:

© ՀՍՍՀ պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության ընկերություն

**Հարությունյան Վարդգոս Մարտիրոս**

ԽՈՐԱՆԱՇԱՏ ՎԱՆՔ

Մասն. խմբագիր՝ Գ. Ս. Շախկյան  
 Խմբագիր՝ Ս. Վ. Ստեփանյան  
 Նկարիչ՝ Ս. Ս. Մկրտչյան  
 Տեխն. խմբագիր՝ Ա. Գ. Ասրյան  
 Վերստուգող սրբագրիչ՝ Գ. Հ. Ղազարյան  
 Հանձնված է շարվածքի 21.07.1986 թ.:  
 Ստորագրված է տպագրության  
 14.07.1987 թ.: Յորմատ՝ 84×108<sup>1</sup>/<sub>32</sub>:  
 Թուղթ՝ «Կապիճապատ», տպագր. 0,42  
 պայմ. մամ., հրատ.՝ 0,4 մամ.: Պատվեր  
 785: Տպարանակ 10000: Գինը 15 կոպ:  
 ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆի-  
 Ջիայի և գրքի առևտրի գործերի պետա-  
 կան կոմիտեի № 2 տպարանի մասնաճյուղ,  
 Երևան, Մարշալ Բաղրամյանի պող. № 26: